Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.
պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:
Share — copy and redistribute the material in any medium or format
Adapt — remix, transform, and build upon the material

502(07)
Σ - 11

09 SEP 2013

30 JUL 2010

Հ. Ս. Խ. Հ. ԼՈՒՍԺՈՂԿՈՄԱՏ. ՈՒՍՄՆԱ-ՄԵԹՈԴԱԿԱՆ ՍԵԿՏՈՐ

Տ03(07)
Հ-11

# ՆԱԽԱԳԻԾ № 3

## 7-ԱՄՅԱ ՅԵՎ ԿՈԼՅԵՐԻՏ ԴՊՐՈՑՆԵՐԻ ԲՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԾՐԱԳԻՐ

### Ա. ԽՈՒՄԲ

#### 1. Առողջապահություն

Սանիտարա-առողջապահական ունակություններ: *Մարմինը խնամելու և հիվանդություններից դերծ պահելու կանոններ և զգուշացուցիչ միջոցներ: (Ձեռքերի, վզի, գլխի, քթի և ատամների մաքրության հոգատարություն): Ոճառի, ջրի, խողանակի և թաշկինակի բանեցնելը: Սննդառության առողջապահությունը: (Ուտել առանձին ամանից, ամանները մաքուր պահել, ուտելուց առաջ ձեռքերը լվանալ): Պարապելու ժամանակ ինչպես նստել սեղանի առջև մարմնին կանոնավոր դիրք տալ:*

Առողջ և հիվանդ մարդ: *Կեղտը վարակիչ հիվանդությունների բույն է: Վարակիչ հիվանդություններ (քութեշ, կարմրուկ, ծաղիկ), ինչպես պաշտպանվել հիվանդանալուց: Կրոնական ծեսերի վնասակարությունը (հաղորդվել, պատկերները համբուրել, ձեռքը համբուրել և այլն): Մաքրությունը տանը և դպրոցում: Թաց չորով հատակը մաքրել, դասարանն օդափոխել, վառները սրբել, անկողնի, հագուստի և կոշիկի խնամքը: Թարմ օդի նշանակությունն առողջության տեսակետից: Առողջությունն ամրապնդելու համար ամառն արևի, ջրի և օդի օգտագործումը: Հիվանդանալու դեպքում բժշկի դիմելու անհրաժեշտությունը: Պառավական հեքիմներին դիմելու վնասները:*

#### 2. Աշուն.

*Աշնան պատկերները—փոփոխություններ բնության և մարդկային աշխատանքների մեջ: Պարտեզի և անտառի տեսքն աշնանը:*

*Էքսկուրսիա դեպի անտառ, այգի և պարտեզ: Աշնան տերևների գույները: Ծանոթանալ ամենատարածված ծառերից և թփերից մի քանիսի հետ: Ասեղնատերև և սաղարթավոր տեսակներ: Ծանոթանալ ծառապտուղների և հատապտուղների հետ (օրինակ—թխկենու, թռչող պտուղները, խողակաղնին, կաղինը և այլն):*

Գործնական աշխատանք.—*Կազմել զանազան ձևի տերևների հավաքածո, պտուղներ, սերմեր:*

*Ոգտակար թռչուններ, դրանց կերակրելու համար ձմեռվա պատրաստություն:*

*Թռչունների չվելը: Ամենատարածված չվող և ձմեռող թռչունները: Ո՞ւր են չվում: Վայրենի կենդանիների ձմեռային պատրաստությունները (նապաստակ, վոզնի, դաշտային մկներ և այլն):*

*Անձրևոտ և պարզ օրեր: Քամի—թույլ, ուժեղ, որտեղից են փչում ցուրտ և տաք քամիները: Ձմեռվա աշխատանքի համար բնության նյութերի պատրաստում և դասարանի զարդարումը:*

Գործնական աշխատանք.—*Կազմել բնության օրացույց, պայմանական նշաններով: Դիտել բնությունը:*

#### 3. Ձմեռ.

*Ձմեռվա ամիսները:*

*Բնության փոփոխությունների դիտողություն: Ցերեկվա կարճանալը և գիշերվա երկարելը: Ամենակարճ օրը: Ջրի սառչելը: Սառույց: Ձյուն:*

Գործնական աշխատանքներ.

*Ձմեռային եղանակների օրացույց կազմել նշաններով:*

*Ընտանի կենդանիները ձմռանը: Նրանց պաշտպանելը ցրտից—կոլխոզի կամ խորհտնտեսության տաք գոմերում: Կոլխոզի գոմերի առավելությունը մենատնտեսների գոմերից:*

Գործնական աշխատանք: *Էքսկուրսիա դեպի գոմ:*

*Ինչպես են անցկացնում ձմեռը վայրի գազանները: Օրինակ—աղվեսը, գայլը, արջը, նապաստակը, սկյուռը և այլն: Թալամաղ գազանների վոտքը: Ձմեռող թռչունների կերակրումը: Ամենատարածվածներից մի քանիսի վրա դիտողություն կատարել:*

Գործնական աշխատանքներ: *Դիտողություններ ագռավի կամ կաչաղակի վրա:*

*Տաք և ցուրտ երկրների բնության պատկերներ: Ձյուն, սառույց, հյուսիսափայլ, բևեռային գիշեր. Ցուրտ երկրների բուսականությունը — մամուռ, գաճաճ-ծառեր: «Կրասին» սառցահատի էքսպեդիցիայի մասին պատմություններ:*

*Ամբողջ տարին տաք է, մշտադալար բուսականություն (արմավենիներ, կիտրոնի և նարնջի ծառեր, թեյի թփեր) տաք երկրներում:*

*Ցուրտ երկրների կենդանիները—սպիտակ արջ, հյուսիսային եղջերու, բևեռային աղվես, իսկ տաք երկրներինը—վագր, առյուծ, փիղ և այլն:*

*Ինչպես են մարդիկ ցրտից պաշտպանվում, բնակարաններ շինում, ինչպես և ինչից են հագուստ պատրաստում: Տաք և ցուրտ երկրների բնակարաններն ու հագուստները:*

Գործնական աշխատանք.—*Ձեռք բերել անցած նյութի վերաբերյալ համապատասխան նկարներ:*

#### 4. Գարուն.

*Դիտողություններ բնության մեջ տեղի ունեցող գարնանային փոփոխությունների (երկար օրեր, տաք, արևոտ օրեր, ձյունի հալչելը, ձյունից ազատված հողեր): Գետերի բացումը—սառցահոս, գետերի վարարումը: Ջրի աշխատանքը (ափերի հեղեղումը):*

Գործնական աշխատանք.—*Էքսկուրսիա դեպի դաշտ, Կազմել գարնան երևույթների օրացույց և գարնան ալբոմ:*

*Ծանոթանալ ավազի հատկության հետ, որ ջուրը ծծվում է, կավի հատկության հետ, որ կպչուն է, չորանալուց հետո կոշտանում է, ջուր չի անցկացնում:*

*Ավազի և կավի օգտագործումը—վորպես շինանյութ:*

*Վերադարձող առաջին թռչունները. կենդանիները գարնանը: Գունափոխություն և բրդափոխություն: Վայրի կենդանիների ձագերի մասին պատմվածքներ:*

*Դիտողություն բողբոջների բացման, դասարանում և դրսում: Սենյակում աճած բույսերի խնամքը: Դիտել սերմի ծլումը: Գյուղատնտեսական աշխատանքները գարնանը, դաշտում, բանջարանոցում և պարտեզում: Էքսկուրսիա դեպի կոլխոզ, խորհտնտեսություն կամ բանվորական բանջարանոց: Արևի ազդեցությամբ ծանոթանալ հորիզոնի կողմերի հետ:*

Գործնական աշխատանք.— *Կազմել բույսերի և բողբոջների հավաքածուներ: Աճեցնել բողբոջներ:*

տերիալի ճիշտ ընտրությունը դասավորումը աշխատավորի մոտ։ Մեքենայի և գործիքների կառուցվածքը և վորակը, նրանց համարեցումը մարմնի պահանջներին, շարժումների ճիշտ յեղանակները և ավտոմատիզացիա։ Աշխատանքի և հանգստի համար հերթավորումը. կարճ կարճ ընդհատումներ հանգստի համար, աշխատանքի տևողությունը— աշխատանքային օր, հանգստյան օրեր, արձակուրդ։ Արտադրություն (գործարան, արհեստանոց, դաշտ) սանիտարական պայմաններ, տեխնիկայի տիրապետելը, վորպես արտադրողականության բարձրացնելու և աշխատանքը առողջացնելու միջոց։ Աշխատանքի պահպանության միջոցները մեզնում և կապիտալիստների մոտ։ Պրոֆեսիայի ընտրությունն և պրոֆօրիենտացիա։

Առկայանը արտադրական հիմնարկում և նրա դերը։

Աշխատանքի սոցիալիստական ձևերը շահագործման բացակայության հիման վրա։ Աշխատանքի պլանավորում և ռացիոնալիզացիա—աշխատավորների և նրանց արտադրողականության բարձրացման համար։ Կոլեկտիվ աշխատանքի կազմակերպման ձևերը (բրիգադ, ցեխ, կոլտնտեսություն, աշխատանքային կոմունաներ), սոց. մրցակցություն և հարվածայնությունը սոցիալիստական աշխատանքների ձև։

Կենցաղի սոցիալիստական վերակառուցումը վորպես աշխատանքի սոց. կազմակերպման պայման։ Սոց. կենցաղի ձևերը—աշխատավորների, առողջության արտադրողականությունը բարձրացնելու միջոց։ Աշխատավորների կուլտուրական և կենցաղային սպասարկումը։ Պայքար կրոնի դեմ։ Առողջ կենցաղ և ֆիզկուլտուրա, պայքար ալկոհոլիզմի դեմ։ Սեռական խնդիրը վորպես սոցիալական խնդիր. մայրության և մանկության պաշտպանությունը մեզնում։ Աշխատավորների առողջության պահպանման կազմակերպում ԽՍՀՄ-ում։ Խորհրդային առողջապահության հիմնական սկզբունքները։

---

Ծրագրի նախագիծը կազմված է հանձնաժողովի կողմից հետևյալ կազմով՝ Տ. Մուշեղյան (նախագահ), Ռ. Գաբրիելյան, Ա. Անտոնյան, Մ. Համբարձումյան։ Ա. Արարատյան։

Նախագիծը հաստատված է ՀՍԽՀ Լուսժողկոմատի ՈւՄՍ-ի կողմից 1932 թ. դեկտ. 13-ին։
Երևան.

ՊԵՏ. ԿԱՆ. ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Библиотека
ՀՍՍՌ-Арм. ССР
им. А. Мясникяна
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

ՊԵՏՀՐԱՏ

Պետհրատի տպարան, Երևան Աբովյան փողոց, Տ010 (բ) Պատվեր 3717 Տիրաժ 2000 Գինը 65 կ.

СА 33-11 / 141

БИБЛИОТЕКА ИНСТИТУТА ВОСТОКОВЕДЕНИЯ Академии Наук СССР

502(07) / Z-11

ՀՀ Ազգային գրադարան
NL0260893